

Քննարկված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային
սլեստական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

« 07 » « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային
սլեստական քոլեջ» ՊՈԱԿ-ի

տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.

թիվ 494 որամանով



**« Գ Ե Դ Ա Ր Բ Ո Ւ Ն Ի Ք Ի Տ Ա Ր Ա Ծ Ա Շ Ր Զ Ա Ն Ա Յ Ի Ն
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ք Ո Ւ Ե Ջ »**

**Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ո Չ Ա Ռ Ե Վ Տ Ր Ա Յ Ի Ն
Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ո Ն**

Ո Ր Ա Կ Ի Ա Պ Ա Հ Ո Վ Մ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

✓

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Կենտրոնը ստեղծվում, վերակազմավորվում է կամ նրա գործունեությունը դադարեցվում է ԳՏՊՔ-ի տնօրինական խորհրդի որոշմամբ և տնօրենի հրամանով:
- 1.2 Կենտրոնի ղեկավարը և աշխատակիցները նշանակվում կամ ազատվում են աշխատանքից տնօրենի հրամանով՝ ըստ գործող աշխատանքային օրենսդրության:
- 1.3 Կենտրոնի աշխատանքներն իրականացվում են քոլեջի տնօրենի և ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ:
- 1.4 Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել որակի ներքին ապահովման կենտրոնի առաջարկությամբ՝ քոլեջի տնօրենի հրամանով:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1 Կենտրոնի նպատակն է կատարել ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների գնահատում, ապահովել դրանց որակի վերահսկում, հաշվետվողականություն և թափանցիկություն, նպաստել շարունակական բարելավմանն ու զարգացմանը:
- 2.2 Կենտրոնի խնդիրներն են.
- Քոլեջում ձևավորել և արմատավորել որակի ապահովման մշակույթը.
 - Ապահովել կրթական ծրագրերի և դրանց իրականացման գործընթացների որակի ապահովման ընթացակարգերի ստեղծումը, մշտադիտարկումը և շարունակական բարելավումը.
 - Ապահովել կրթության որակի ապահովման չափորոշիչներին համապատասխան օրինակելի փորձի բացահայտումն ու տարածումը քոլեջում.
 - Ապահովել քոլեջի հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1 Քոլեջում մշակել որակի ապահովման քաղաքականություն և համակարգ, ներդրման համապատասխան միջոցներ, գործիքներ.

3.2 Հավաքագրել, համակարգել և մշակել քոլեջում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ տեղեկատվություն, ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

3.3 Իրականացնել քոլեջի ինստիտուցիոնալ ինքնագնահատման և վերլուծության կազմակերպում.

3.4 Պարբերաբար իրականացնել քանակական և որակական հետազոտություններ քոլեջում որակի ապահովման շրջանակներում՝ արդյունքները հասանելի դարձնելով ներքին և արտաքին շահակիցներին,

3.5 Համագործակցել ուսանողների և քոլեջի ստորաբաժանումների հետ՝ որակի ապահովման գործառույթներն իրականացնելիս,

3.6 Համագործակցել որակի արտաքին գնահատումն իրականացնող կառույցների հետ:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Որակի ներքին ապահովման կենտրոնը կազմված է ղեկավարից, աշխատանքային և ուսանողական խմբերից, անհրաժեշտության դեպքում նաև ժամանակավոր խմբերից:

4.2 Որակի ներքին ապահովման կենտրոնի ղեկավարի գործառույթներն են՝

- Ղեկավարել և վերահսկել կենտրոնի աշխատանքները.
- Պատասխանատվություն կրել կենտրոնի որակի և նրա առջև դրված գործառույթների իրականացման համար.
- Մշակել ներքին և արտաքին շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմներ ու համապատասխան փաստաթղթեր.

4.3 Կազմակերպել և իրականացնել քոլեջի նախնական ինքնավերլուծություն.

4.4 Ձևավորել որակի ներքին ապահովմանն ուղղված ուսանողական շարժում.

4.5 Աշխատանքային խմբերը կազմվում են առարկայական (ցիկլային) հանձնաժողովների (ամբիոնների), ղեկավարների և դասախոսների մասնակցությամբ:

4.6 Աշխատանքային խմբերի գործառույթներն են՝

- Կազմակերպել քոլեջի գործունեության, ուսումնական գործընթացների գնահատման վերաբերյալ հարցումներ, վերլուծել դրանց արդյունքները.
- Ցուցաբերել մեթոդական օգնություն դասախոսական կազմին.
- Վերանայել քոլեջի ներքին կարգերը և համապատասխանեցնել գործող չափանիշներին, հետևել դրանց իրագործման ընթացքին.

4.7 Ուսանողական խումբը բաղկացած է խմբի նախագահից և յուրաքանչյուր կուրսի մեկ ուսանողից:

4.8 Ուսանողական խմբի գործառույթներն են՝

- Ծանոթացնել ուսանողներին իրենց իրավունքներից օգտվելու հնարավորություններից.
- Կազմակերպել ուսանողական քննարկումներ ուսանողական խորհրդի հետ՝ բացահայտելու կրթության որակի հետ կապված խնդիրներ, որակի ապահովման կենտրոնին ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
- Աջակցել մշտադիտարկման մեթոդիկայի մշակմանը: